Հաստատված է՝
ԵՊԼՀ ՍԳՍ ֆակուլտետի խորհրդի
հունվարի 30-ի № 9 նիստի որոշմամբ
ԵՊԼՀ ՍԳՍ ֆակուլտետի խորհրդի նախագահ՝
_____ Ն. Ա. Ակոպյան

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍԵՐՎԻՍԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի /այսուհետ՝ ԵՊԼՀ/ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի /այսուհետ՝ ՍԳՍ/ ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի /այսուհետ՝ Աշխատանք/ գրախոսման ընթացակարգը /այսուհետ՝ Ընթացակարգ/ մշակված է ՀՀ կրթության և գիտության նախարարի «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի /հրաման Հ. 1282-Ն, 07.11.2011թ./, ԵՊԼՀ Կանոնադրության, ««Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» հիմնադրամի ուսանողների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգի հիման վրա:
2. Աշխատանքը հետազոտական բնույթի է և հաստատում է ուսանողի կողմից կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական

գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

3. Գրախոսի կարծիք տրամադրվում է համապատասխան ոլորտի փորձառու մասնագետների կողմից: Բակալավրի ավարտական աշխատանքի դեպքում այն պետք է իրականացվի ԵՊԼՀ աշխատակցի կամ այլ հաստատության աշխատակցի, իսկ մագիստրոսական թեզի դեպքում՝ միայն այլ հաստատության աշխատակցի կողմից:
4. Գրախոսողների կազմը ամբիոնի վարիչի կամ գիտաուսումնական կենտրոնի /այսուհետ՝ ԳՈՒԿ/ ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է ամբիոնի կամ ԳՈՒԿ-ի նիստում և այդ մասին տեղյակ պահվում ուսանողներին:
5. Սույն ընթացակարգը հաստատում և դրանում փոփոխություններ է իրականացնում ՍԳՍ ֆակուլտետի խորհուրդը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. Ավարտած Աշխատանքը ստորագրվում է ուսանողի կողմից և հաստատված ժամկետներում ներկայացվում ամբիոն կամ ԳՈՒԿ՝ կարծիքի համար, ոչ ուշ, քան պաշտպանության համար հաստատված ժամկետից 20 օր: Աշխատանքի հետ միասին ուսանողը ամբիոն կամ ԳՈՒԿ է հանձնում նաև ղեկավարի ստորագրությամբ հաստատված գրավոր կարծիքը /Հավելված 1/:
7. Ամբիոնը կամ ԳՈՒԿ-ը Աշխատանքը հանձնում է գրախոսին:
8. Գրախոսի կարծիքի պատրաստման համար տրվում է ոչ ավել, քան 10 օր: Այն իրականացվում է համաձայն Հավելված 2-ի: Գրախոսի կարծիքը ստանալուց հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ փոփոխություններ կատարել:
9. Աշխատանքի վերլուծության ժամանակ գրախոսը գնահատում է.
   1) թեմայի ընտրության հիմնավորվածությունը,
   2) տվյալ թեմայի համապատասխանությունը մասնագիտությանը, ըստ որի շնորհվում է որակավորում,
   3) Աշխատանքի մեջ ազգային և միջազգային գիտնականների աշխատություններում տվյալ թեմայի վերաբերյալ տեսական

եզրակացությունների օգտագործման լիարժեքությունը,

4) նպատակի և խնդիրների համապատասխանությունը աշխատանքի բովանդակությանը, խնդիրների լուծման լիարժեքությունը, նյութի շարադրման տրամաբանությունը,

5) խնդրի ուսումնասիրման և սեփական առաջարկների ձևակերպման համար ուսանողի կողմից ընտրված հետազոտվող սոցիալական օբյեկտների՝ կազմակերպությունների, հաստատությունների, գործունեության օրինաչափություններն ու մեխանիզմը բացահայտող դրույթները,

6) խնդրահարույց իրավիճակի վերլուծության կոնկրետ մեթոդների կիրառման մակարդակը,

7) հեղինակի կողմից կատարված հետազոտությունների կոնկրետ արդյունքների և իրադրության գնահատման առկայությունը, առաջարկությունների և եզրակացությունների հիմնավորվածությունը, նրանց համաձայնեցվածությունը առաջադրվող նպատակների և խնդիրների հետ,

8) եզրակացությունների հիմնավորումը և փաստարկումը, ուսանողի դատողությունների ինքնուրույնությունը,

9) աշխատանքի ձևակերպման պահանջների պահպանումը,

10) հեղինակի առաջարկած՝ իր կողմից մշակված առաջարկությունների գնահատման եղանակները, տվյալ խնդրի հետազոտման հետագա հեռանկարների որոշումը,

11) ընտրած մեթոդների կիրառումը Աշխատանքում:

10. Գրախոսի կարծիքը պետք է պարունակի նաև պաշտպանությանը թույլատրելու /չթույլատրելու/ հակիրճ հիմնավորում:

11. Գրախոսի կարծիքի արդյունքն է հանդիսանում գրախոսի եզրակացությունը Աշխատանքի պաշտպանության հնարավորության մասին և գնահատականը, որին գրախոսի կարծիքով արժանի է տվյալ Աշխատանքը: Գրախոսը Աշխատանքը գնահատում է 100 միավորանոց սանդղակով:

12. Աշխատանքը սահմանված ժամկետներում ղեկավարի և գրախոսի կարծիքների

հետ միասին ներկայացվում է ամբիոնի վարիչին կամ ԳՈՒԿ-ի ղեկավարին:

13. ՈՒսանողը կարող է մասնակցել հրապարակային պաշտպանության, նույնիսկ այն դեպքում, եթե ղեկավարի կամ գրախոսների կարծիքները բացասական են:
14. ՈՒսանողը պաշտպանությունից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ծանոթանում է գրախոսի կարծիքի բովանդակությանը և նախապատրաստվում է հրապարակային պաշտպանության՝ դրանում առկա դիտողություններին և առաջարկություններին պատասխանելու համար:
15. Աշխատանքը, ղեկավարի և գրախոսների կարծիքները պաշտպանությունից 2 աշխատանքային օր առաջ հանձնավում է ՍԳՍ ֆակուլտետի դեկանին:

Հավելված 1

ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ

ԵՊԼՀ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի «_____» մասնագիտության _____ կուրսի ուսանող/ուհի/ _____-ի

/ազգանուն, անուն, հայրանուն/

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ՂԵԿԱՎԱՐ՝ _____ _____

/պաշտոն, գիտ. աստիճան, գիտ. կոչում/ /ստորագրություն/

«_____»_____թ.

Հավելված 2

ԳՐԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԵՊԼՀ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի

«_____» մասնագիտության

_____ կուրսի ուսանող/ուհի/ _____-ի

/ազգանուն, անուն, հայրանուն/

«_____» թեմայով

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

ԳՐԱԽՈՍ՝ _____ _____

/պաշտոն, գիտ. աստիճան, գիտ. կոչում/ /ստորագրություն/

«_____»_____թ.